

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԻԿ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԽԻՎ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисы, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են

իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ:

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Նուէն Միքայէլեան Իգիտական, Մարիամ Միքայէլեան Բուրգիկեանցը, Յովհաննէս Միքայէլեան և Նատալիա Ալեքսանդրեան Շալամեանները ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին առաջիններն իրանց թանգագին և անմոռանալի եղբոր, իսկ վերջինս իր սիրելի տագեր՝

Գ Ա Ն Ի Թ Մ Ի Բ Ս Յ Է Լ Ե Ն Չ Ա Լ Ա Մ Ե Ն Ց Ի

անժամանակ մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 29-ին: Ամբիճը լինելու է շարաթ, ամսի 1-ին, երկնայեան ժամի 7-ին: Իսկ մարմինը յուղարկուած էր կը լինի կիրակի, մայիսի 2-ին, առաւօտեան ժամի 10-ին, սեփական տնից (Արեւիկայի պարտէզի մէջ № 18) դէպի Մոզուս և Գեղարք հեղեղներ, իսկ այնտեղից վերայի գերեզմանատունը:

2—2

Բարեկ Վարպէսեան Բարսեղեանց ծանուցանելով իր թանգագին կրտսեր եղբոր՝

Գ Ր Ի Գ Ո Ր Բ Ա Ր Ս Ա Մ Ե Ն Ց Ի

վաղաժամ մահը ծանր հիւանդութեանց յետոյ, որ տեղի ունեցաւ ապրիլի 30-ին, յայտնում է ազգականներին և ծանօթներին, որ թողման պատարագը լինելու է Հաւրարարի վարդապետ Աւետարանի եկեղեցում, կիրակի, մայիսի 2-ին, առաւօտեան ժամի 11-ին: Թաղումը կը լինի Խօջիվանքի գերեզմանատանը:

2—2

ԲՈՎԱՆԵՆԻՆԻՆԻՆ

Մովսիս յոյժի համար.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՆ. Հայերէն նստադրած երգեր. Մատենադրութիւն. Բագուի Մարգարեական ընկերութեան ընդհանուր ժողովը. Նամակ Աստուածացի. Նամակ Կաղզուանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱՅԻՆԻՆԻՆ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆԻՆԻՆ:

ԾՈՎԱՅԻՆ ՈՅԺԻ ՀԱՄԱՐ

Ներկայումս եւրոպական նաւաշինարանները եւանդուն գործունէութեան մէջ են: Իւրաքանչիւր պետութիւն շտապում է իր զինուորական նաւերի թիւը աւելացնել, որպէս զի նա կարող լինի իր շահերը պաշտպանել, եթէ հարկաւոր լինի ծովային ուժի գլխիկը:

Նաւաշինարանները զբաղված են նախ և առաջ բաւարարութիւն տալու պատերազմող կողմերին, որովհետեւ տրված պատուէրները կարճ միջոցով են պայմանաւորված և արտօնող վիճակի մէջ են գնելի տեսակէտով: Բայց և այնպէս նաւերի պատրաստութիւնը կը պահանջէ գործարաններից երկար ամիսներ, մինչև որ հնարաւոր կը լինի վերջնական ձևով նրանց յանձնել պատուիրողներին և գործադրութեան մէջ դնել:

Մովսիսի պատերազմական մեծ ուժնաւոր մեծ առաւելութիւններ է տալիս իւրաքանչիւր պետութեան, բայց զրանից դուրս կան ուրիշ անհրաժեշտ պայմաններ, որոնց ներկայութիւնը միայն զարմնում է նաւատորմները իսկապէս ահաւոր և պատկառելի: Դրանից մէկը քաղէ ամբողջ կանոնաւոր մատակարարութեան գործն է, որ էական նշանակութիւն ունի, մասնաւորապէս պատերազմների ժամանակ, որովհետեւ նաւերը կարող են մատակարար լինել անհրաժեշտութեան, եթէ նրանք հնարաւորութիւն չունեն որոշ ծովայիններում կանգ առնել և քարէածխի նոր պաշարներ վերցնել: Ուղղութեան ժամանակ նաւերը քարէածխի ստանում են ամեն մի մեծ կայարանում, ուր կան ամբողջ պաշարներ, իսկ պատերազմի ժամանակ ոչ ոք չէ վստահանում քարէածխի տալ կուտը կողմերին, որովհետեւ զրանով թանգարկած կը լինի պետութիւնների չէզոքութիւնը:

Անգլիան և Նրա օրինակին հետևող պիւս եւրոպական պետութիւնները միշտ սեծ նշանակութիւն են տուել քարէածխի սեփական կայարաններ ունենալու խնդրին և ուշ ուշով հետևել են, որ այդ կայարանները ապահովված լինեն

ամեն տեսակ պատահարները վստահելի: Ներկայ պատերազմի ընթացքում եւրոպական պետութիւնները աւելի ևս մեծ ուղղութեամբ վերաբերվեցին իրանց ծովային գործութեան հանգամանքներին և այժմ ծրագրում են մի շարք միջոցներ թէ իրանց զինուորական նաւատորմը մեծացնելու, թէ քարէածխի կայարանները և քարէածխի պաշարները ապահովելու և թէ լաւ պաշտպանված նաւահանգիստներ ձևով բացելու:

Մակայն այդքան էլ հեշտ չէ այդ ամենը իրադրութիւն և փոխադրած մրցութիւնը թող չէ տալիս, որ իւրաքանչիւրը ստեղծէ իր համար նպատակաւոր վիճակ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԱՅԵՐԵՆԻՆ ՆՕՏԱԳՐԱՄԵՐ ԵՐԳԵՐ

Մենք ստացանք Գ. Բոյաջեանից նոր կազմած և հրատարակած հայ ժողովրդական երգերի մի տետր, որի մէջ գեղեցկաբայ և տան երգ: Հայերէն բնագրի հետ գլուխքից զբաղւած է և Քրանստեղծ թարգմանութիւնը, որ կատարել է Ա. Չօլանեան: Դաշնամուրի համար ներդաշնակել է երաժիշտ Ա. Սերիբեյ:

Մի համառոտ առաջաբանի մէջ, Պիեր Օրբի խօսում է հայկական ժողովրդական երգերի երաժշտական կազմի մասին: Օրբի նկատել է, որ հայկական զաման ունի առանձնայատկութիւն, որով նա տարբերվում է ուրիշ զամաններից: Շնորհիւ այս առանձնայատկութեան՝ հայկական երգը կարելի է ճանաչել արեւելեան ուրիշ երգանկների շարքում: Հայը, ասում է Օրբի, գտել է մի փոքրիկ խորամանկութիւն՝ ապագայ դարերի կեդրարարներին մերկայանալու համար: Նա ինքն էլ ունի մի խրոմատիզմ, որ արեւելեան է աշխարհագրական դիրքով, բայց ոչ Յունաց, ոչ Ասորաց խրոմատիզմի, ոչ էլ Արաբների չիճազը:

Ներկայ տետրի մէջ գեղեցկաբայ են հետևեալ երգերը. «Ձան գիւղում», «Մըր խօր պապիկէ գերեզման», «Հաբլըբան», «Ճախարակ», «Գաթէր տեղէն», «Բերդիցը գուլիս ելայ», «Գընաց աշուն եկաւ գետուն», «Բօլըբ բարձր», «Անի բաղաբ նստեր կուլար» և «Մշու ողբը»: Երգերը նստադրված են երեք տողով, որոնցից առաջինը երկգրգողութեան, իսկ միւսները դաշնամուրի համար:

Տետրը հրատարակված է Պարիզում: Գինն է 5 ֆրանկ:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Բժ. Ա. Բուրաղեան. «Գործարանի թէ երկրագործութիւն». 59 էր. Պետերբուրգ, 1904 թ. գինը 15 կ.: Կան հասարակական հարցեր, որոնք զար-

մանալի միակերպութեամբ կրկնվում են զանազան երկրներին ու ազգերին վերաբերմամբ, միշտ պահպանելով իրանց առանձնայատկութիւնը: Դիտելով իրանց զգրկութիւնը միատեսակ վէճերի ու եզրակացութիւնների:

Այս ալը շարքին է պատկանում և «գիւղը, թէ քաղաքը», «գործարան», թէ երկրագործութիւն» հարցը, որ իր ժամանակին այնքան տաք բանավեճեր է առաջացրել թէ եւրոպական և թէ առանձնապէս ռուսական մամուլի էջերում:

Ով որ ծանօթ է ռուսաց գրականութեանը, նա անշուշտ կը յիշէ ռուս «Լաւոնիկ-Ների» փայտաշէն գաղափարները, արծարծած մըտքերը, կը յիշէ, թէ ինչպէս նրանք «սերունդները» էին համարում գիւղը, գիւղական կեանքն ու նրա հերոս «մուսիկին»: Գիւղ Ուսպենսկին ու Ջրառովրատսկին իրանց պատմաձգներով պատկերացնում էին այդ իրէական միջավայրը, իսկ Վ. Վ., Կարլից, Իւզով, Նիկոլայ-Օն և ուրիշ շատերը աշխատում են տեսական-տնտեսագիտական հիմունքներով ապացուցանել գիւղի մեծ նշանակութիւնը, հողի ու երկրագործութեան ապագայ յաղթանակը:

Բայց 90-ական թվականներից մի նոր հոսանք է սկսվում, որ քարոզում է թէ հողն ու գիւղը չեն ժողովրդի հարստութեան հիմնաքարը, այլ մարդկային այն եռանդը, այն ջրուռ ձեռքերը, որոնք մշակում են հողը, որոնք մեծածախսեղ արժեքաւոր առարկաներ են դարձնում: Լինի դա գիւղում կամ քաղաքում, փակ գործարանում կամ բացօդային հողի վրա—այդ մի և նոյն է: Ուրեմն ժողովրդի վիճակը բարձրելու համար անհրաժեշտ է աշխատանքի պայմանները կանոնաւորել:

Այդ նոր հոսանքը ուժեղ արձագանք է գտնում մամուլի էջերում, դեկավար ունենալով Տուգան Բարսեղեանի, Սպարկի, Ֆիլիպովի, Արտեմի, Բուրիլի, Սկոբոլովի և ուրիշ շատերին:

Ժամանակի ընթացքում բանավեճն աւելի ու աւելի սուր կերպարանք է ստանում, ասկայն կեանքը լոկալ-միջոցի շարունակում է իր ընթացքը և իր առաջացրած պէս-պէս երևութիւններով ապացուցանում, որ երկրորդ հոսանքի արծարծած սկզբունքներն են աւելի մօտ իրականութեան, որ գործարանական կեանքը օրէցօր զարգանում է և շարունակ դէպ իրան քաղաքում գիւղական ազգաբնակչութիւնը, որ բարի խորհուրդներն ու բացօդ համոզմունքներն անկարող են տնտեսական այդ երկու ձեւաւորութիւնը:

Այժմ այլևս չը կան նախկին տաք բանավեճերը, գիւղի ու քաղաքի, գործարանի ու երկրագործութեան մասին եղած սուր վէճերը: Մակայն երբեմն-երբեմն պարբերական մամուլի էջերում լոյս տեսնող մանրիկ յօդուածները իբրև խուլ արձագանք գալիս են յիշեցնելու մօտիկ անցնալի հրատապ հարցը:

Այս ալը մի և նոյն հարցն է, որ վերջին ժամանակներս մերթ ընդ մերթ հրապարակ է գալիս հայոց գրականութեան էջերում. այդ հարցն է շոշափում և մեր ժողովրդական գրող բժիշկը—պ. Բուրաղեանը: Նա իրան յատուկ հանրամատչելի ոճով պատկերացնում է մեր քաղաքների հակա-առողջական պայմանները, գործարանական կեանքի վատ կողմերը, գիւղացուն դէպի քաղաք մղող մի բանի հանգամանքները, բանարական կեանքի չարաշուքները, և գալիս է այն եզրակացութեան, որ «Հողը, հողը կատարեցին մեզ ամեն կողմից»...

Ուրեմն մէկ դէպի հողը, ձգտում դէպի գիւղը, բայց բարեբաղդաբար պ. Բուրաղեանը նախօրէնական այդ հակումը շարունակում է անտեսական մի կենդանի միջոցի հետ: Նա առաջարկում է համաշխարհային-հոօպիւրատիւ-ընկերակցութիւններ կազմակերպել և դրանց միջոցով բարձրել ժողովրդի վիճակը, թող չէ տալ, որ ամեն մի դժբաղդ դէպք, ամեն չի պատահականութիւն իւր գիւղացուն «տանից-վաթանից» և զգէ գործարանների սև ու մութ նկուղները: Նրա կարծիքով «պէտք է

վերածնալի թէ գիւղը և թէ քաղաքը, պէտք է աշխատանք. լացով և ողբալով մենք աւելի ու աւելի կոչնչանալը. միայն խելացի աշխատանքը, փոխադարձ սէրը և ժամանակի ոգին ըմբռնել մեզ կը փրկեն»...

Միանգամայն իրաւացի դիտողութիւն, բայց ինչպէս և ինչ գործօնների շնորհիւ պէտք է կատարվի գիւղի ու քաղաքի աշխատի վերածնութիւնը—այն հիմնական հարցը, որի մանրամասն լուսաբանութիւնը աւելի քան ցանկալի է:

Ե. Թ.

ԲԱՐՈՒՄ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

(Նամակ Խմբագրութեան)

Ապրիլի 24-ին գումայի դահլիճում տեղի ունեցաւ հայոց Մարգարեական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը վարչութեան անցեալ 1903 թվականի գործունէութիւնը ընդհանուր անկումը նպատակով: Վերապահելով ժողովում տեղի ունեցած վիճաբանութիւնների արձանագրութիւնը ուրիշների, մենք մեր կողմից ուղղութեան կանոններ միայն ընկերութեան Աշխատանքի Տան առիթով շոշափած հարցերը:

Բագուի Մարգարեական ընկերութիւնը աղքատներին խնամելու գործը մինչև վերջին տարիները վարում էր նախաջրեղեղեան պրիմիտիվ եղանակով—հարուստներից, ունեւորներից ժողովելով փող, որպէս նուէրներ և բաժանելով նրան չբաւարարող, արքայաներին, որպէս ողորմութիւն. աղքատներին նախապատկան այդ պարզ, անմեղ եղանակը եւրոպական ազգերի մէջ վաղուց է տեղի տուել աւելի նշանակալից արժանիք, աւելի խելացի այլ եղանակներ, հիմնված ինքնօգնութեան, ինքնաշխատութեան սկզբունքի վրա. տեղիւն են մի շարք կազմակերպութիւններ, հիմնարկութիւններ, որտեղ աղքատները կրթվելով, ուսում, արհեստ սովորելով ոչ միայն ազատ են մնում պարապ կեանքի, փողոցի աննպատակ պայմանների վատ ազդեցութիւններից, այլ և ձեռք են բերում որոշ փէշակ, որպէս զէնք ապագայում կեանքի կռիւի մասնակցելու... Աղքատներին, չբաւարարող օգնութեան ձեռք կարկառելու այդ էջօլիցիան ըմբռնել է և Մարգարեական ընկերութիւնը՝ հիմնելով Աշխատանքի Տան:

Տարաբաղաբար Բագուի հայոց Աշխատանքի Տանը, ըստ երկու թիւն, դեռ շատ հեռու է իր նպատակին հաւատարմութեամբ ծառայելուց, և այդ բանը պարզվեց ժողովում տեղի ունեցած հետեւեալ վիճաբանութիւններից:

Ա. Թաղիաճեանց, ընդհանուր ժողովի նախագահ. Առաջարկում եմ ժողովականներին յայտնել իրանց նկատողութիւնները վարչութեան ներկայացրած տեղեկագրի վերաբերեալ:

Մեխակեանց. Տեղեկագրի համաձայն, Աշխատանքի Տան մէջ եղել են 7 բաժանմունքներ. 1) կար և ձիւ, 2) կազմարարական, 3) չուստեր կարելու, 4) ձկնորսական ցանցերի հիւսման, 5) պակեա մաքրելու ու քրքրելու, 6) թղթի տոլարակներ և կապոց կրելու կանթեր պատրաստելու և 7) չեմօքաններ պատրաստելու: Այդ բաժանմունքներից առաջինը տուել է ընկերութեան դուռ միայն 292 ռ. 89 կոպէկ, երկրորդը՝ 856 ռ. 78 կ., երրորդը՝ 544 ռ. 19 կ., չորրորդը՝ 277 ռ. 48 կ., հինգերորդը՝ 70 ռ. 78 կ., վեցերորդը՝ 378 ռ. 12 կ. և վերջապէս եօթներորդը բաժանմունքը 17 ռուբլի. ընդամենը 2437 ռ. 24 կ.: Ինչպէս ամենքիս յայտնի է, քաղաքումս յիշեալ արհեստներով, զիցուր կազմարարութեան, կար ու ձիւով, պակի մաքրելով և այլն, պարագում են առհազին բանակութեամբ մարդիկ, որոնք ոչ միայն փախանք չեն կրում, այլ և հայթայթում են ապրուստ, գոնէ նոյն իսկ սև օրվան կօպէկներ յետաձգելով. թող, որ ընկերութեան Տանը աշխատանք, օգնու չունենար, բայց նա պէտք է գէթ ազատ լինէր զգալի զեփեցիտից, փախից... Չէ կարող արեւօք վարչութիւնը

բացատրել ժողովականներին այդ ֆիսաների բուն պատճառը. հետևաբար են արդեօք այդ ֆիսաները Աշխատանքի Տան կազմակերպության, գործիչների անձնականության, թե՛ նրանք, կրելով օրգանական բնաւորութիւն, անխուսափելի են...

Ֆ. Մարգարեանց: Այսպէս, որ ինքը յանձնաժողովը նախագահ. Պէտք է ասեմ, որ ինքը յանձնաժողովը յաճախ ուշադրութեան է առել տեղի ունեցած ֆիսաները, աշխատելով բացատրել նրանց պատճառները. տարբաբար, խոստովանելով անկողնօրէն, չէ կարողացել դալ որոշ եղբայրացիներ: Անձնապէս ես այն կարծիքի եմ, որ չունենալով մշտական գործ, բայց ստիպւած լինելով վճարել վարպետներին ուսուցիչ, Տունը բնականաբար պէտք է ֆիսավէր...

Պ. Մելիքեանց: Ինչպէս պահել վարպետներ, երբ գործ չը կայ:

Ս. Յարութեանց: Վարչութեան նախագահ: Մեր մէջ կարծեք սովորութիւն է դարձել դատարաններ գործիչներին, առանց ցանկութիւն ունենալու թափանցել գործի էութիւնը. վարչութիւնը հետո է իր գործունէութիւնը իդէալ հոգեկեղծ ցանկութիւնից, բայց և այնպէս անարդարութիւն է մեղադրել մեզ անձնականութեան մէջ. վարչութիւնը հնարաւորութեան չափ գործում է գործում է. գալով Աշխատանքի Տան հաշտարար ընթացքում տուած համաձայնական ֆիսան, պէտք է այդ բացատրել նրանով, որ Տունը ունեցել է, բայց անմիջական ծախսերից, մի շարք այսպէս ասած վերադիր ծախսեր, ինչպէս է, օրինակ, տան վարձը և այլն: Նրա Աշխատանքի Տունը կը տեղափոխվի սեփական շինութիւնը և կազմավորի տան վարձ տալուց, հաւանականօրէն նա ֆիսաներ չի ունենայ...

Պ. Մելիքեանց: Վերադիր ծախսեր, շինութեան վարձ պահանջում են բոլոր արհեստանոցներում, ամեն մի փեշակաւորից, ծառաւոր այդտեղ փնտրել Աշխատանքի Տան ֆիսան պատճառը, կը նշանակէ փակել աչքերը իրականութեան վրա: Ես պարտաւոր եմ խոստովանել ներկայ վարչութեան համեմատական օգտաւէտ գործունէութիւնը, բայց և այնպէս Աշխատանքի Տունը նոր գործ է և որպէս նոր գործ բնականաբար կունենայ պակասութիւններ, թերութիւններ, որ անհրաժեշտ է գտնել և օր առաջ ուղղել. յամենայն դէպս գերադասելի է մեղադրել քննադատութեան խտրութեան մէջ, քան հետեւի հայերիս մէջ դարբերել ի վեր բուն դրած ամեն ինչ քննադատ, ամեն ինչ սպանող «եօլայ տանելու» զաղրելի սկզբունքներ...

Ա. Ղուկասեան: Հետաքրքիր է իմանալ վարչութիւնը, Աշխատանքի Տան արդիւնները վաճառ հանելիս, ղեկավարվում է արդեօք որ և է սկզբունքով թէ ոչ. ի նկատմէ ունենում արդեօք նա ապրանքի ընկերութեան իրան նստած արժէքի չափը, թէ ղեկավարվում է շուկայի գններով... պ. Ս. Սարգսեան վկայում է, որ գրեթէ կազմելը ընդհանրապէս վաճառվել են շուկայի գններից պակասով:

Ա. Ղուկասեան: Աշխատանքի Տունը նշանակելով իր ապրանքների համար աւելի պակաս գներ, քան գոյութիւն ունեն շուկայում, բնականաբար ֆիսաւում է շուկայի մի շարք արհեստաւորներին, առաջացնելով ֆիսասկար մրցում. այդ մրցումը վարչութիւնը տանում է հեշտութեամբ, միջոց ունենալով իր ղեկից, ցիտը ծածկել ժողովրդական նուէրներով, մինչդեռ միւս արհեստաւորները, անկարող լինելով դիմանալ ղեկիցիւնների, բնականաբար պէտք է թողնեն իրանց փեշակը, հեռանան ասպարէզից, մատնելով ընտանիքը աղքատութեան. հետևաբար Բարեկեցութեան ընկերութիւնը, կամենալով օգնել մի շարք չբաւարարների, միւս կողմից ֆիսաւում է մի այլ շարք աղքատներ. ասել է, նա մի ձեռքով շինածը միւս ձեռքով քանդում է:

Ֆ. Մարգարեան: Ի՞նչու են մի քանի պարոններ այդքան ծանրանում ֆիսաների վրա: Աշխատանքի Տունը ակցիոներական կամ վաճառականական հիմնարկութիւն չէ, որպէս զի ղեկավարվել օգտի, աշխատանքի սկզբունքով. նա ներկայացնելով ապաստարան և տալով չբաւարարներին գործելու միջոց, բնականաբար պէտք է ֆիսաներ կրէ և որքան վերջինները մեծ լինեն, փոքր չէ:

Յ. Խօզալեան: Նախ քան վճռել այն հարցը, թէ արդեօք օգուտ թէ ֆիսա պէտք է սպասել Աշխատանքի Տնից, պէտք է որոշել այն նպատակը, որին պէտք է ծառայէ Տունը. պէտք է նա արդեօք ներկայացնէ ուսումնաբան, արհեստանոց, ապաստարան, թէ վաճառականական մի հիմնարկութիւն...

Յ. Սաղաթեան: Աշխատանքի Տունը չէ կարող ծառայել որպէս վաճառականական հիմնարկութիւն, քանի որ այդ դուրս է Բարեկեցութեան ընկերութեան նպատակներից. դարձնել նրան արհեստանոց, որտեղ աղքատները որոշ արհեստ սովորելով, կը մտնեն կեանք, կարելի չը կայ, քանի որ այդ նպատակի համար գոյութիւն ունեն մասնաւոր մարդկանց արհեստանոցները. Աշխատանքի Տունը ներկայացնում է լոկ մի ապաստարան, որտեղ աղքատները, փոխանակ պարապ մատուցող, զբաղված են որ և է ժամանակաւոր գործով. հետևաբար այդպիսի գործը չէ կարող օգուտ բերել. նա միայն ֆիսա կը պատճառէ, որի հետ և պէտք է հարգել...

Վ. Խաչատուր: Ես միանգամայն համաձայն եմ պ. Սաղաթեանի հետ. անտեղի է մեծ պահանջներ անել Աշխատանքի Տնից. չբաւարարելով, աղքատները, մնալով այդտեղ մի քանի օր, կամ մի քանի շաբաթ, մինչև որ կը գնան իրանց գործին, բնականաբար անձնական են գործ կատարելու. մեզ մնում է միայն ցանկանալ, որ Աշխատանքի Տունը աւելի մեծ չափով ծառայէ իր նպատակին, այն է որքան հնարաւոր է մեծ քանակութեամբ աղքատներ ընդունէ և դուրս հանէ:

Յ. Ղուկասեան: Հարկաւոր է Աշխատանքի Տունը գնել լուրջ հիմունքների վրա. պէտք է ստեղծել նրանից օրինակելի արհեստանոց, իսկ թէ այդ դէպքում օգուտ թէ ֆիսա կը պատճառէ նա ընկերութեան, այդ կարեւոր չէ:

Ա. Վալեանց: Տուած բացատրութիւններից և տեղեկագրի բերած թելադրանքներին է որոշել Աշխատանքի Տան ֆիսաների բուն պատճառները. ցանկալի է ընտրել մի մասնաժողով գործը հիմնաւորապէս ընկերու ներպատակով:

Ժողովը ընդունելով այդ առաջարկութիւնը, ընտրում է մասնաժողովի անդամներ պ. պ. Ն. Բարսեղեանցին, Ս. Թադևոսեանցին, Ժամատեանցին և Պ. Մելիքեանցին. պարտաւորեցնելով նրանց կազմել ղեկուցում և ներկայացնել հետեւեալ ընդհանուր ժողովին:

Գուցէ իր ժամանակին մենք հնարաւորութիւն կունենանք «Մշակու» էջերում խօսել այդ ղեկուցման մասին, իսկ այժմ աւելորդ չենք համարում, վերջացնելով մեր թղթակցութիւնը, լուսաբանել բերած կարծիքները համաձայն մեր տեսակէտի: Մեր կարծիքով, պ. պ. Սաղաթեանց և Սաղաթեանց շարաւար սխալվում են. նրանք Աշխատանքի Տունը դարձնում են անկեղծանոց, առողջ, գործի կարօտ, աշխատանքի ընդունակ չբաւարարներին մեխելով անգործութեան, պարապ ժամերու անարդ փեշակ. Սաղաթեանց—Սաղաթեանցի ծրագրած Աշխատանքի Տունը ներկայացնում է լոկ ոգործութեան տուն, վերջիններիս յատուկ բոլոր բացասական կողմերով. այդտեղ չէ կարող զարգանալ ոչ մի սէր դէպի աշխատանք, ոչ մի յարգանք դէպի աշխատաւորի մարդկային արժանապատուութիւնը. աշխատանքը, օգտաւէտ աշխատանքն է միայն հիմք տալիս առողջ անհատին մարդկային ցեղի, հասարակութեան համահաւասար պատուաւոր անդամ կոչվելու. ինչպէս զրկել աղքատներին մարդկային այդ ամենաթանկագին, ամենապանծ պատուից, իրաւունքից:

Մենք միանգամայն համալարծիք ենք պ. Ղուկասեանցի հետ. Աշխատանքի Տունը պէտք է դարձնել օրինակելի արհեստանոց. ի հարկէ, այդ արհեստանոցում գէթ առ այժմ, միջոցների սղութեան պատճառով, անհնարին է մտցնել բարդ, երկար ժամանակ պահանջող արհեստներ, բայց անշուշտ մի շարք հասարակ փեշակներ, ինչպէս են, օրինակ, կազմարարութիւնը և այլն, մեծ հմտութեամբ կարող են իւրացնել. այդ եղանակով Աշխատանքի Տունը ոչ միայն շատ թէ քիչ ապահոված կը լինի մի շարք աղքատների սպաւան, դարձնելով նրանց հասարակութեան պիտանի անդամներ, այլ և կը ստեղծէ եկամուտի, աշխատանքի անապատ աղբիւր, հնարաւորութիւն տալով աւելի ու աւելի ընդարձակել իր գործունէութիւնը: Յամենայն դէպս, համամասն Աշխատանքի Տան պատճառած ֆիսաւը, եթէ այդ տեղի կունենայ և որ ըստ իմ հաւանական չէ, հնարաւոր է ուրախութեամբ տանել, ի նկատի առնելով նրա տուած աշխատաւորների, փեշակաւորների կոնտինգենտը:

Պ. Մելիքեանց

ՆԱՄՍԿ ԱՍԽԱՏԱՆԻՑ

Ապրիլի 30-ին

Ներկայումս ամբողջ Անդրկասպեան երկիրը և Թուրքեստանը այնպիսի ծանր դրութեան

մէջ են, որից դուրս գալու համար զանազան ճանապարհներ են որոնում: Դա միւր, հացի և այլ մթերքների հարցն է, որոնց գները տալիս են արժեքներ, որոնցով պահանջ է դրացվում միջոցներ ձեռք առնելու ժողովրդին սպաւալ աւելի ծանր դրութիւնից ազատելու համար: Երկիրը բոլորովին անկարող է տալ այն քանակութեամբ մթերք, որ բաւականութիւն տար թէ ժողովրդին և թէ զօրքին, հետևապէս անհրաժեշտ է դառնում դիմել օտարի օգնութեան:

Երկիրը լինելով Աւղանիստանի և Պարսկաստանի սահմանակից, պետութիւնը ստիպւած է մեծ քանակութեամբ զօրք պահել. այդ զօրքից իւրացանալիւ բաւարկօնի տրվում է օրեկան 16—18 ֆունտ միս, իսկ ամբողջ զօրքին և բնակչութեան Անդրկասպեան երկիրը ոչ մի կերպ հնարաւորութիւն չունի մատակարարել այնքան անասուն, որ փոքր ի շատէ բաւականութիւն տալ կարողանար, ուրեմն մնում է ներմուծել Աւղանիստանից և Պարսկաստանից: Մի քանի ժամանակ առաջ ներմուծած ապրանքներ թէև բաւականութիւն տալիս էր, սակայն այժմ, այլ և այլ հանգամանքների պատճառով, այլ ևս բաւականաչափ անասուն չէ ներմուծվում և մասնաւոր անհատներ համար էլ գուցէ դժուար լինի բիսկ անել ներմուծելու պահանջած քանակութեամբ անասուն: Մնում է յոյս դնել կառավարութեան աջակցութեան վրա, որ մի որոշ գումար բաց թողնելով, մարդիկ ուղարկվեն Պարսկաստան և Աւղանիստան՝ գնելու և ներմուծելու մեծ քանակութեամբ անասուն, իսկ այդ աւելի աշտոնութիւն կունենայ, որովհետև վճարը կանխիկ կը լինի: Այդպիսով մի քիչը կարող է ընկնել և սպաւալ թանգութիւնից ազատ կացուցանել ժողովրդին:

Եթէ սրա վրա աւելացնենք տնտեսական միւս կարեւոր մթերքի, հացի պակասութիւնը, որ վերջին ժամանակներս աւելի ևս զգալի է դարձել, այդ դէպքում կատարեալ հասկանալի կը լինի, թէ ինչ ճգնաժամի կարող է հասնել զիստաւորապէս տեղական բնակչութիւնը:

Այս կողմերը մեծ քանակութեամբ ալիւր է ներմուծվում Ռուսաստանից և Կովկասից, սակայն այդ ևս բոլորովին բաւականութիւն չէր տալ, եթէ չը լինէր տեղական բերքը: Բայց այս երբորդ տարին է, որ երևան է եկել անկող հիւր—մուրիւր և կարելի է ասել, որ ամեն մի բուսականութիւն կատարեալապէս փչացնում է. սարսափելի է մասնաւոր այս տարի. Անդրկասպեան երկրի ամեն մի անկեղծանոց յուսահատութեան ձայներ են լսվում: Մորեկ երեւցել է և այն տեղերում, որտեղ անցեալ տարի ոչինչ չը կար և չէին կարծում թէ այս տարի կը լինի: Կառավարութեան անցեալ տարի գործ դրած միջոցները համար մար թէ ապարդիւն անցան: Այժմ մեծ գումար է յատկացված մորեկը ուղեւորներու համար: Բաւականաչափ զինւորներ են ուղարկված, մասնագետներ են հրաւիրվում, վարձատրութիւն են տալիս ներկայացրած իւրաքանչիւր մի մորեկի համար 50 կոպէկ. եւ արդեօք այդպէս ներկայիս կը կրկնուի, մարդիկ զբաղեցնել և ծախքեր անելուց յետոյ յուսալ կարելի է որ և է բարեկալով հետևանք տեսնելու:

Ա. Ասովմեանց

ՆԱՄՍԿ ԿԱԶՈՒՄՆԻՑ

Ապրիլի 24-ին

Տեղիս հայ հասարակութիւնը մի այլ հաւելած ունեցաւ բժ. Գ. Կաճկաճեանի հեռանալով: Նա վաղուց պաշտօնով կանչված էր իր հայրենի Ղլարը բաղրաւ, սակայն, շատ քաղցր յիշատակներով կապված լինելով Կաղզուանի հետ, երկար ժամանակ չէր կարողանում հաշտվել հեռանալու մտքի հետ:

Կաճկաճեան 80-ական թւականներին, իր երիտասարդական վառ հասակում, աստղի նման փայլում էր իր եռանդուն գործունէութեամբ. նա ոչ միայն հմուտ և փորձված բժիշկ էր, այլ և հասարակական գործերում առաջին դեր խաղացող էր: Նա, ընկեր ունենալով բժ. Յ. Մամիկոնեանին, որը մի ժամանակ ճիշդ բժ. Նաստավիլի դերն էր կատարում մեզանում և որին հասարակութիւնը մի և նոյն պատուով ճանաչար՝ գլխից Բագու, թէ ուսումնաբանի, թէ Բարեգործական ընկերութեան ճիւղի և թէ եկեղեցական գործերի մէջ ղեկավար էր հանդիսանում: Սակայն անցան այն երջանիկ օրեր. բժ. Մամիկոնեանը հեռացաւ դէպի Բագու, իսկ բժ. Կաճկաճեան մի յանկարծակի հիւանդութիւն ստանալով, ցաւի տակ միանգամայն ընկճվեց, այնպէս որ նոյն իսկ բժշկական

գործին անգին անգամ չէր կարողանում իր ցանկացածին պէս եռանդով կաշկեր:

Մի քանի տարի է, որ նա տարեկան 600 ռուբլի կենսաթոշակ է ստանում միայն, իսկ այցելութեան վճար շատ քիչ, որովհետև միւր տեղական ժողովուրդը, շնորհիւ պ. պ. Մամիկոնեանի և Նաստավիլի ձրի բժշկութեան, դեռ չէ ընտելացել այդ վճարին, ուստի բժ. Կաճկաճեանը վերջին տարիներում նիւթական նեղութիւն էր կրում, որը եղաւ նրա Կաղզուանից հեռանալու գլխաւոր պատճառը: Թէև վերջին օրերում հասարակութեան կողմից տարեկան 700 ռուբլի առաջարկվեց տալ, որ նա չը հեռանայ, բայց ուշ էր, արդէն գրաւոր կերպով իր համաձայնութիւնը յայտնել էր իրան հրաւիրողներին: Բժ. Կաճկաճեանի տեղիցս հեռանալը մեծ հարուած է ընդհանրապէս տեղիս բոլոր հասարակութեան, մասնաւորապէս բնակչւնի համար այն պատճառով, որ թէ բժ. Նաստավիլին փոխարինող բժիշկը (որի մասին այժմանից լաւ լուրեր են լսվում) և թէ գաւառական բժ. Ժիւղովին փոխարինողը հայերէն չը գիտեն, իսկ բնակչւնի մեծ մասը ուսուցիչ չը գիտէ:

Մ. Ղուկասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 1-ին Թիֆլիսի դատաստանական պալատը, դռնփակ ընկնելով Գանձակի բնակիչ Արշակ Բաճակեանի և Գեորգ Կուշիշեանի դործը, որոնք մեղադրվում էին զօրօգօյ Սերգեյ Ակոբովի դէմ սպանութեան փորձ անելու համար, կարճատեւ խորհրդակցութիւնից յետոյ որոշեց հաստատել Գանձակի նահանգական դատարանի վճիռը, որով մեղադրվածները արգար էին ճանաչված: Պալատի վճիռը յայտարարվեց դուրաց: Գործը անցել էր պալատը դատարանի օգնական Բուդանովսկի բողոքով: Մեղադրեալներին պաշտպանում էր պաշտօնավոր դատախազի օգնական Մ. Լազարեան:

Թիֆլիսում կազմակերպվում է մի ընկերութիւն, որը ձեռնարկելու է առսօւօլիսի նաւորակցութիւնը բաղաւթ և Կոլորի ու Մանգլիսի միջև: Սկզբում դիտարկութիւն կայ գործածութեան մէջ մտցնել միայն չորս հասիւնընաշարժ հանրակութիւն:

Արդէն պաշտօնապէս յայտարարված է, որ Ռուսաստանի և Գերմանիայի միջև կը կատարվի պատու փողի փոխադրութիւն՝ ներքին հաղորդակցութեան մէջ կատարվող ձեռք:

Ուրբաթ, ապրիլի 30-ին, Բաց արժուականների բանկի թատրոնում հայ դերասաններից ու դերասանուհիներից մի քանիսը սերդներին մատակցութեամբ ներկայացրին «Անտակը» դրաման և «Գիշերվան սարը խէր է» վօլըվը: Դրամայի ընտրութիւնն այնքան անաւող էր, որ չը նայելով դերակատարների բոլոր շանքերին, խաղը չէր հետաքրքրում անոնց այն էլ սակաւաթիւ հանդիսականներին: Սուշուրեկեանցի կոմիկիան անցկացաւ բաւական աւող: Սաղի սկսվեց շատ ուշ և վերջացաւ շատ ուշ:

Մեր խմբագրութեան ուղարկած հաշվից երևում է, որ կոյրերի խնամատար ընկերութեան Կովկասեան բաժինը, որը հաստատված է 1839 թւին, մինչև այժմ բաց է արել 1) մի ուսումնաբան արհեստաւորական բաժնով 40 կոյր երեխաների համար և 2) 25 մանկավարժ մի ձրի ակաւարտութեամբ, որից ձրիապէս օգտվում են տարեկան 5000 աշխի հիւանդութիւն ունեցող անձեր: Նոյն տեսակի բուժարաններ հաստատել է ընկերութիւնը Ստաւրօպոլում, Եկատերինօպոլում, Վլադիկավկազում, Պատիգօրսկում, Ղլարում, Երևանում և Նոր-Բայազետում: Այլի առաջ ունենալով ընկերութեան այլքան լայն մարդասիրական գործունէութիւնը՝ արժէ, որ հասարակութիւնը օգնէ նրան նիւթապէս:

Թիֆլիսի տեխնիքական ընկերութիւնը խնդրում է քաղաքագլխին թոյլատրել նոյն պայմաններով, ինչ պայմաններով թոյլատրվում է կայսերական բժշկական ընկերութեան, մասնակցել յանուն Պուշկինի կառուցվելիք գրադարանի երկրորդ յարկի շինութեանը, թոյլատրելով ընկերութեան օգտվել շինութեանից 15 տարվայ ընթացքում, որից յետոյ շինութիւնը անցնում է քաղաքին:

Թիֆլիսում վերջին ժամանակներս տներ

я «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 8